№ 48 Մարտի 17 (29) 1881 Մարտի 17 (29) № 48

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Բաժանորդագրութիւնները ղրկւում են այս հասցէով
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւններ ընդունւում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարւում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Երեւանից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գերմանիա. Թիւրքիա. Սովը Հայաստանում. Սպանիա. Նամակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մարտի 1-ին

Պարսից ազգը, ասում են, չէ յառաջադիմում. լուսաւորութեան ասած գաղափարը հեռու է այդ ազգի միջից: Ինչ է պատճառը: Յայտնի է, որ յառաջադիմութիւնը, լուսաւորութիւնը անմիջական հետեւանք են դպրոցական գործի և գրականութեան, յայտնի է և այն, որ Պարսկաստանում դպրոցական գործը շատ ցանցառ, նահապետական քայլերով է ընթանում, ինչպէս ասած, նա ոչ մի ընթացք չունի. իսկ գրականութիւնը որովհետեւ կախումն ունի դպրոցական գործի զարգութիւնից, ուրեմն ասել այդ ազգութեան մէջ գրականութիւն էլ չէ կարող լինել:

Ասելիք են շատ գործեր և այդ ազգը իր վերածնութեան համար ոչինչ չէ արել: Չէ գտնվել մի հասարակ պարսիկ, մի ինքնակալ թագաւոր, որ լցված լինէր փիլիսոփայական մտքերով, ժամանակակից լուսաւոր գաղափարներով, դէմ գնէր իր հոգեւորականների կրօնական ոյժերին, նրանց մէջ արմատացած նախապաշարմունքներին և ինքնեկէր այդ ազգը լուսաւորութեան ուղիղ ճանապարհի վրայ դնելու յուսով: Եւ այսուհետեւ դժուար է յուսալ, որ պարսիկների միջից դուրս գայ լուսաւոր գաղափարներով մէկը, որ մի և նոյն ժամանակ իր մտաւոր և բարոյական ոյժերով ցնցէր նախապաշարմունքներին և ընդհանրապէս այդ ազգի ֆանատիկոսական ոգուն: Ուրեմն ասիական ժողովրդների, մանաւանդ պարսիկների լուսաւորութեան առաջադիմութեան գործի երաշխաւորութիւնը կախված պիտի է լինի մի ուրիշ հարեւան ազգից:

Չը գիտեմ քաղաքագէտ որ մէկը յայտնեց այն կարծիքը, այն մեծ միտքը, որ հայերը Ասիայում միակ ազգն են, որոնք ասիական միւս ազգերի լուսաւորութեան հիմնադիրն են լինելու: Ուրեմն, կարծում եմ, չի հակառակվի հարեւան այդ խօսքերի ճշմարտութիւնը: Միթէ յայտնի չէ, որ, մինչդեռ պարսիկները քնած են, մի քանի հայ ուսումնականները հոգս են տանում պարսիկներին լեզուի համար դասագրքեր հրատարակելու: Միթէ յայտնի չէ, որ արեւելագէտ Ստեփանոս Նազարեանցը մի ժամանակ մտածում էր հաստատուիլ Պարսկաստանում, այդ երկրի դպրոցական գործին նոր կերպ է տալու համար:

Վերջին օրերում, լսում ենք, որ հէնց այդ մտքով ոգեշնչված պարսից մեծամեծ կեանքը փոփոխելու զարթեցնելու համար պ. Վ. Մասսեհեանը թարգմանել է հայկական տառերով պարսկերէն մի այբենարան, որ նա մտադիր է յանձնել մի պարսիկ հրատարակչի, թուրքերէն գրատառերի փոխադրելու համար:

Սա թէև մի ծանր աշխատութիւն է հեղինակի համար, բայց թող հաւատան մեզ հետ ասենք, որ նա մխիթարված կը լինի այն յուսով, որ պարսիկները եւ, ինչպէս միւս ազգերը, այդ գրքի միջոցով կարող են ծանօթանալ թատրոնական բեմի գործի և նրա նշանակութեան հետ, երբ որ առաջին անգամ կը խօսվի այդ գրուածքը իրենց լեզուի վրայ:

Կարծում եմ, որ աւելորդ չի լինի ծանօթացնել ընթերցողներին այդ պիեսայի բովանդակութեան հետ:

Պարսկաստանի Դարգէհ (Թաւրիզ) քաղաքում Միրզա—Ջաֆար անունով մի երիտասարդ ժառանգ է համարվում իր հանգուցեալ հօր կալուածներին, որոնցից նա կամենում է զրկել իր միակ քոյր Գիւլ-Սանամին: Ամբողջ գրուածքը պտտւում է այս երկու անձնաւորութիւնների վրայ: Առաջին գործողութեան մէջ պատկերանում է մեզ Միրզա-Ջաֆարը իր զուարճալի ժողովով. նա խօսում է, միջոցներ է որոնում, թէ ինչ կերպով ազատել իր քրոջ ժառանգական պահանջներից և ապացուցանել իր միակ իրաւունքը հայրական կալուածների վրայ: Նա գտնում է իր մէջ մի ստամոքսային միջոց՝ կաշառելով իր քաղաքացիներից մի քանիսին՝ պատրաստում է մի վկայական, որից երեւում է, թէ Գիւլ-Սանամը բաժնված է ժառանգութիւնից Միրզա-Ջաֆարի տանը իւրեն ազգերին, այն պայմանով, որ երբ աղջիկը իր հասակին առնի, Միրզա-Ջաֆարը պարտաւորված լինի թէկուզ օժիտով ամուսնացնել նրան՝ այդ աղջկան մարդու տալ:

Այդ վկայականը մի օր եղբայրը ցոյց է տալիս քրոջը, որ մնում է քարացած իր անգութ եղբօր արարմունքի վրայ:

Հասանը՝ Միրզա-Ջաֆարի խանութի երիտասարդ գործակատարը, որ սիրահարված է լինում Գիւլ-Սանամի վրայ, հասկանալով իր անգութ տիրոջ միտքը՝ խորհուրդ է տալիս աղջկան՝ գնալ Սարդարի մօտ գանգատ, իսկ թէ ինչ կը լինի նրա գանգատի հետեւանքը, ինքը խոստանում է օգնել նրան այդ գործում: Աղջիկը թէեւ առաջին անգամ տատանվում է, բայց վերջը համաձայնվում է Հասանի խօսքերին:

Հասանի կողմից Գիւլ-Սանամին պաշտպանութիւն տալը մի միջոց է, որով պարսիկ գործակատարը կամենում է վրէժ առնել իր տիրոջից նրա՝ սպառնացող վարմունքի և իրեն վարձատրութիւն չը տալու համար: Այսպէս վերջանում է առաջին գործողութիւնը:

Երկրորդ գործողութեան մէջ ներկայանում է Թաւրիզի Սարդար Յաթէայի իր չափազանցական փառքով. նա պատմում է, թէ ինչպէս իրեն, իբրև դատաւորի մօտ խնդրատուներ են գալիս, գնում և թէ ինչպէս այս վերջին օրը եկել է նրա մօտ մի մանկահասակ գեղեցիկ օրիորդ և գանգատվելով իր փեսացուի վրայ, որ ամբողջ մի տարի առաջ խոստացել էր իրեն կին առնել, իսկ այժմ հրաժարվում է,—խնդրում էր ստիպել նրան ամուսնանալ իր հետ ժողովրդի բամբասանքից ու նախատինքից ազատվելու համար:

Այսպէս Սարդարը հրամայում է բերել տալ իրան մօտ Միրզա-Ջաֆարին, որին, ի հարկէ, ինքը չէ ճանաչում: Երբ Միրզա-Ջաֆարը ներկայանում է Սարդարին, այս վերջինը յայտնում է նրան, թէ լսելով նրա հարստութեան լուրը և բարի անունը՝ կամենում է ինքը իւր հայրական խնամքը առնել նրա վրայ, ամուսնացնել նրան իր հովանաւորած մի գեղեցիկ օրիորդի հետ և խնդրում է նրանից երաշխաւոր անել իրեն, ախունդներ հրաւիրել և երկուսի քեբինը կարդալ: Երիտասարդը տալիս է Սարդարին իր անպայման համաձայնութիւնը, թանկագին նրա առաջ հազար ու մի արքայական կանխիկ մատնանիշներ: Հրաւիրվում են ախունդները, արվում է փառաւոր ընթրիք, որից յետոյ կատարվում է երկու ամուսնացողների պսակական հանդէսը:

Երրորդ գործողութեան մէջ Յաթէայի Սարդարը բերում է հարսին և յանձնելով փեսային՝ ասում է նրան. «Այժմ կարող ես տեսնել, թէ ինչպիսի ամուսին եմ ընտրել քեզ համար»: Երիտասարդ աղջկայ գեղեցկութիւնը տեսնելով՝ սէր ստացողից յետ է քաշվում. «Ներեցէք, յանկարծ—ասում է նա—ես չեմ կարող ամուսնանալ իմ արենակցի հետ՝ դա իմ քոյրն է»:

Այս լսելուն պէս Սարդարը սաստիկ բարկացած աղջկայ վրայ՝ հրամայում է ֆարրաշներին կախաղան բարձրացնել յանցաւորին, որ նա համարձակվեցաւ ծաղրել իրեն և, կամենալով խախտել Մահամէդի սուրբ օրէնքները՝ պսակվել իր եղբօր հետ:

Աղջիկը կախաղան բարձրանալուց առաջ խնդրում է Սարդարից մի քանի խօսք ասել նրան և հանելով իր գրպանից այն կեղծ վկայականը, որի զօրութեամբ եղբայրը կամենում էր զրկել իրեն հայրական ժառանգութիւնից, տալիս է այն դատաւոր—Սարդարին: Եթէ այս վկայականը ճիշդ է, ասում աղջիկը, ուրեմն ես դրա քոյրը չեմ, իսկ եթէ ես դրա քոյրն եմ, ինչպէս ինքը խոստովանեց, այն ժամանակ այս վկայականը կեղծ է:

Սարդարը հասկանալով այս գործում եղած խարդախութիւնը, իսկոյն հրամայում է աղջկայ փոխարէն կախաղան հանել Միրզա Ջաֆարին:

Մինչև որ ֆարրաշները դուրս կը տանէին երիտասարդին, Գիւլ-Սանամ՝ նրա քոյրը ընկնում է Սարդարի ոտները և խնդրում է նրանից խնայել եղբօր կեանքը, որովհետեւ ինքը ոչ թէ կամենում էր հօր կալուածներից բաժին ստանալ, այլ ապացուցանել եղբօրը, որ ինքը նրա հարազատ քոյրն է: Եւ նա այժմ հասած է իր նպատակին:

Սարդարը խնայելով երիտասարդի կեանքը՝ հրամայում է նրան կտակական վարձատրել Գիւլ-Սանամին և նրան իսկոյն պսակել է Հասանի հետ, որ հաւատարմութիւնից չարժված եկած դուրս տարածուի էր եղել: Թէ ինչպէս էր վերջանում Սարդարի վճիռը իր հետագայ գործի վերաբերութեամբ: Ահա այս է ամբողջ պիեսայի բովանդակութիւնը:

Պ. Վ. Մասսեհեանցի այդ գրուածքը ես իմ նամակին կցում եմ հրատարակելու համար: Թէ Ասիայում կայ մի ազգ, որ կարող է բարոյապէս ներգործել միւս հարեւան ազգերի վրայ — դա հայոց ազգն է: Ցանկանում ենք, որ շատերը լինեն մեր մէջ պ. Մասսեհեանի պէս մարդիկ:

Յովհաննէս-Հէթում

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մարտի 15-ին, ինչպէս յայտնի է հեռագիրներից, կատարվեցաւ հանգուցեալ թագաւոր կայսրի թաղման հանդէսը: Մեր Թիֆլիսի ամեն դաւանութիւնների եկեղեցիներում այդ օր կատարվում էին հոգեհանգստեան հանգուցեալ կայսրի յիշատակին: Եկեղեցիների զանգակների ձայնը միախառնվում էր թնդանօթների որոտման հետ:

—

«Русск. Курьеръ» լրագրին հաղորդում են Խարկովից որ այդ քաղաքի բազմաթիւ կանայք լցնում են եկեղեցիներ, պահանջելով որ նրանց էլ թոյլ տրվի երդում տալ նոր թագաւորին: Բայց քահանաները այդպիսի հրահանգներ չունենալով կանանց երդվեցնելու մասին, մերժում են կանանց այդ խնդիրքը:

—

Մարտի 14-ին, երեկոյեան ժամը 7-ին Թիֆլիսի հէլլենական եկեղեցում կատարվեցաւ հոգեհանգիստ հանգուցեալ կայսր Ալէքսանդր Նիկոլաեւիչի յիշատակին: Տաճարը լի էր բազմաթիւ հէլլէն երկսեռ հասարակութեամբ: Հրաւիրվածների թւում մենք նշմարեցինք կովկասեան գլխաւոր կառավարութեան անդամ, գեներալ Ստարոսելսկուն իր ընտանիքով, Թիֆլիսի պ. նահանգապետ իշխան Գագարինին, քաղաքագլուխ պ. Մատինովին և մի քանի այլ անձանց: Ռուսերէն լեզուով մի արտասանող ճառ ասաց թագաւորի մահուան մասին: Ամբողջ կառավարչական անդամները աղօթում էին կայսր Ալէքսանդր Ալէքսանդրովիչի երկարակեցութեան համար: Աղօթքները և երգեցողութիւնը շատ գեղեցիկ և սրտաշարժ էին: Իր ճառի մէջ քարոզիչը յիշեց այն բարութիւնները որ ստացել են Օսմանեան հէլլէնները հանգուցեալ թագաւորի ձեռքով:

—

Լրագիրները հաղորդում են որ մարտի 1-ի եղեռնագործութեան ժամանակ հանգուցեալ թագաւորի թիկնապահ կազակներից մէկը Մալէեւը, որ վախճանվեցաւ ստացած վէրքերից, ստարօօբրիադցի անունով աղանդաւոր էր: Նրա թաղման ժամանակ առաջին անգամ թոյլ տվեցին այդ աղանդին պատկանողներին հանդիսաւոր և հրապարակապէս թաղել և երգեցողութիւն անել դիակի վրայ: Այն ինչ մինչև այժմ այդ աղանդի պատկանողներին հրապարակապէս թաղել իրաւունք չը կար Ռուսաստանում:

—

«Порядокъ» լրագրում կարդում ենք, որ ինչպէս յայտնի է մարտի 1-ի գիշերը կայացել էր Ս. Պետերբուրգում մինիստրների արտակարգ նիստը կայսերական պալատի մէջ: Այդ նիստի մէջ վճռվեցաւ պետութեան ընթացող գործերի կառավարութիւնը յանձնել կոմս Լօրիս-Մէլիքովին:

—

Լրագիրները լսել են, որ Պետական խորհուրդը վճռել է գումարել պատգամաւորներին նահանգներից, նրանց մասնակցութեամբ ներքին մի քանի խնդիրների մասին խորհրդակցելու նպատակով:

—

Լսվում է որ կառավարութիւնը դիտաւորութիւն ունի կանգնեցնել Անդրկովկասի սահմանագծի վրայ պահպանող զօրքեր, Քարս-Արդահանից մեր սահմանները ժամանակաւոր [illegible] ազատ պահելու համար:

—

Ս. Պետերբուրգի լրագիրներին հաղորդում են որ [illegible] կալանաւորվեցաւ իր հետ, կառավարչական կարգադրութեան մէջ:

—

Թագաւորասպանի ազգանունը մինչև այժմ յայտնի չէ. «Пет. Газета» լրագիրը կարծում է որ նրա ազգանունն է Ֆօմին, իսկ «Новое Время» կարծում է որ դա քաղաքական յանցաւոր Սուխանովն է:

—

Անձնասպան Նովիկովի բնակարանում կալանաւորված հրէուհին քաղաքական յանցաւոր Դէյչի քոյրն է:

—

Լօնդոնի ոստիկանութիւնը խնդիր է տուել Ս. Պետերբուրգի ոստիկանութեան որ զգոյշ լինի, որովհետեւ մի քանի ռուս նիհիլիստներ դիտաւորութիւն ունեն անցնել ռուսաց սահմանները և սպառնում են թագաւոր կայսրի կեանքին:

—

Լրագիրները հաղորդում են որ մարտից մի քանի ժամանակ առաջ հանգուցեալ թագաւորը ստացել էր արտասահմանից մի փոքրիկ արկղիկ, որի մէջ իբր թէ պիլիւլներ (համբիր) կային: Թագաւորը տալիս այդ արկղիկը բժշկապետ Բոտկինին նրա միջի եղած պիլիւլները հետազօտելու համար և յայտնվեցաւ որ այդ արկղիկը մի նուրբ մեքենայ էր, որից թագաւոր կայսրը պէտք է սպանվէր: Եթէ Բոտկինը չը վնասվեց, դա միայն այն պատճառով էր, որ մեքենան խանգարութիւնից փչացել էր և արկղիկը բաց անելու ժամանակ պայթիւնը չը կատարվեցաւ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Բեռլինի լրագիրներին հեռագրում են Ճենեւայից: Գերմանական Վիւրցբուրգ քաղաքից հրաման է տուած պաշտօնեաներին և զօրքերին առհասարակ չորս շաբաթ սուգ